Արձանագրություն
Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2019թ. հուլիսի 8-ի նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու վեց անդամները՝ Մարզպետունի Ավետիսյանը, Ռուստամ Ներսիսյանը, Արմեն Սիրականյանը, Նորայր Սիրականյանը, Մամիկոն Նազարյանը և Շմավոն Կարապետյանը:

Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Սիրականյանը:

Արձանագրեց Գ.Ղազարյանը:

Օրակարգ՝

Հարց-1. Համայնքի 2019թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-2. Համայնքի մանկապարտեզի մի խումբ աշխատակիցների դիմումի քննարկումը, նրանց աշխատավարձերը բարձրացնելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-3. Վարդաձոր համայնքի բնակիչ, <<Գոզե>> ՍՊԸ տնօրեն Արմեն Սիրականյանի դիմումի քննարկում, նրան համայնքի <<Սարի Դեմեր>> տարածքից 9.0հա արոտավայր վարձակալության տալու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-4. Համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 14-ի թիվ 25-Ն որոշման 2-րդ կետով սահմանված՝ համայնքապետարանին պատկանող հացահատիկային կոմբայնի բերքահավաքի աշխատանքների համար 1հա հնձելու վճարը փոփոխելու մասին:

Օրակարգը քվեարկվեց՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3. Մամիկոն Նազարյան

4. Ռուստամ Ներսիսյան

5. Արմեն Սիրականյան

6. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

8-ը հուլիսի 2019թ. գ. Վարդաձոր

# Համայնքի 2019թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի 2019թ. տարեկան բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն.
մուտքային մասը՝ ըստ թիվ 1 հավելվածի
նախատեսված առաջադրանքը 36355700 /երեսունվեց միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր/ դրամ, հավաքագրումը՝ 35966800 /երեսունհիգ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար ութ հարյուր դրամ: Կատարման տոկոսը՝ 98.9:
Ընդամենը ծախսային մասը՝ ըստ թիվ 2 հավելվածի 42226600 /քառասուներկու միլիոն երկու հարյուր քսանվեց հազար վեց հարյուր/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան
2. Շմավոն Կարապետյան
3. Մամիկոն Նազարյան
4. Ռուստամ Ներսիսյան
5. Արմեն Սիրականյան
6. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

Հաստատված է Վարդաձոր համայնքի անագանու
2019թ. հուլիսի 8-ի թիվ 20-Ն որոշմամբ

# Վարդաձոր համայնքի 2019թ. տարեկան բյուջեի եկամուտները

Հավելված 1

| | Եկամուտների անվանումը | 6 ամսվա առաջադրանք | 3 ամիսների կատարված. | Կատարողականը | Կատարման տոկոս 6 ամիս |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հողի հարկեր | 2400.0 | 612.6 | | 25.5 |
| 2. | Գույքահարկ փոխադրամիջոցների | 2800.0 | 3730.0 | | 133.2 |
| | | | | | |
| 3. | Տեղական տուրք | 37.0 | 36.0 | | 97.2 |
| | ն/թ շին. թույլտվության համար | | | | |
| | ոգելից խմիչքների վաճառքի թ/տ | 37.0 | 36.0 | | 97.2 |
| | | | | | |
| 4. | Պետ. բյուջեից համահարթեցման դոտացիա | 29923.7 | 29923.7 | | 100.0 |
| | | | | | |
| 5. | Այլ եկամուտներ | 1195.0 | 1664.5 | | 139.3 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից | 100.0 | 240.0 | | 240.0 |
| | ն/թ հողերի վարձակալություն | | | | |
| | ն/թ արոտից գանձվող վարձավճար | | | | |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձ.-ից | 510.0 | 510.0 | | 100.0 |
| | Օրանժ Արմենիա | 240.0 | 240.0 | | 100.0 |
| | Վիվասել | 270.0 | 270.0 | | 100.0 |
| | Գնված մեխանիզմների ծառայություններից, (կոմբայն, բելոռուս-82) | 75.0 | 0 | | 0 |
| | օրենքով սահմանված գանձում /աղբահանության ծառ. վճար/ | 510.0 | 0 | | 0.0 |
| | Մանկապարտեզ հաճախող երեխաների վճար | 0 | 914.5 | | |
| | | | | | |
| | Ընդամենը սեփական եկամուտներ | 6432.0 | 6043.1 | | 93.9 |
| | | | | | |
| | Ընդամենը | 36355.7 | 35966.8 | | 98.9 |

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան

Հաշվապահ՝ Մ. Ավետիսյան

Հաստատված է Վարդաձոր համայնքի անագանու
2019թ. հուլիսի 8-ի թիվ 20-Ն որոշմամբ

Վարդաձոր համայնքի 2019թ. 1-ին կիսամյակի բյուջե ծախսերը

Հավելված 2

| | Ծախսերի անվանումը | 6 ամիս | Կատարման տոկոս | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 4111 | Աշխատավարձ | 11990.8 | | | | |
| 4112 | Պարգևատրում | 0 | | | | |
| 4111 | Մշակույթի տան ֆինանսավորում | 2296.8 | | | | |
| 4212 | Փողոցային լուսավորություն | 613.1 | | | | |
| 4213 | Աղբահանում | 444.8 | | | | |
| 4214 | Ինտերնետի վարձ, ՄԻՕՄ | 0 | | | | |
| 4215 | Ավտոապահովագրություն | 28.0 | | | | |
| 4216 | Գույքի վարձակալություն | 0 | | | | |
| 4221 | Գործուղում | 21.4 | | | | |
| 4232 | Համ. ծառ.«Վեկտոր պլյուս» ՍՊԸ | 10.8 | | | | |
| 4232 | Տեղեկատվ. համակ. զարգացման և վերապատրաստման կենտրոն | 0 | | | | |
| 4232 | «Ցենզուր» տեղեկատվական | 0 | | | | |
| 4234 | Թերթեր | 50.0 | | | | |
| 4234 | Հաղորդման նկարահանում և ցուցադրում | 95.0 | | | | |
| 4235 | Գյուղ. խորհրդ. ծառ. Աուդիտ | 350.0 | | | | |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառ. /ուղևորափոխադրումներ/ | 0 | | | | |
| 4251 | Ճանապարհ և տրանսպորտ | 920.0 | | | | |
| 4251 | Ոռոգում | 2800.0 | | | | |
| 4251 | Փողոցային լուս. նորոգում | 600.0 | | | | |
| 4251 | Ջրամատակարարում | 0 | | | | |
| 4252 | Մեքենայի ընթ. նորոգում | 366.0 | | | | |
| 4261 | Գրասենյակային նյութեր | 186.0 | | | | |
| 4264 | Բենզինի գնում | 640.0 | | | | |
| 4267 | Կենցաղային նյութեր | 0 | | | | |
| 4511 | Նախադպրոցական կրթություն | 12987.5 | | | | |
| 4729 | Դրամական օգնություն | 582.0 | | | | |
| 5113 | ՕԶԿ Վերանորոգման ներդրում | 5500.0 | | | | |
| 5121 | Կոմբայնի ձեռքբերում | 1444.4 | | | | |
| 5122 | Գույքի ձեռքբերում | 0 | | | | |
| 5134 | Նախագիծ նախահաշիվ | 300.0 | | | | |
| | | | | | | |
| | Ընդամենը | 42226.6 | | | | |

Վարդաձորի գյուղապետ` Ռ. Սիրականյան

Հաշվապահ` Մ. Ավետիսյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21-Ա

8-ը հուլիսի 2019թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## Համայնքի մանկապարտեզի մի խումբ աշխատակիցների դիմումի քննարկումը, նրանց աշխատավարձերը բարձրացնելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով և նկատի ունենալով, որ համայնքի բյուջեում առաջիկայում չեն սպասվում լրացուցիչ մուտքեր և ներկայում բյուջեի փոփոխություն նպատակահարմար չէ կատարել,

### Համայնքի ավագանին որոշում է`

1. Համայնքի մանկապարտեզի աշխատակիցների աշխատավարձերի վերանայումը թողնել 2020թ. տարեսկզբի բյուջեն պլանավորելու ժամանակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց`

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3. Մամիկոն Նազարյան

4. Ռուստամ Ներսիսյան

5. Արմեն Սիրականյան

6. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

8-ը հուլիսի 2019թ. գ. Վարդաձոր

---

## Վարդաձոր համայնքի բնակիչ, <<Գոզե>> ՍՊԸ տնօրեն Արմեն Սիրականյանի դիմումի քննարկում, նրան համայնքի <<Սարի Դեմեր>> տարածքից 9.0հա արոտավայր վարձակալության տալու մասին:

Նշվում է, որ <<Սարի Դեմեր>> կոչվող արոտավայրը համարվում է համայնքի անդամների անասունների արածեցման վայր, այդ տարածքով անասունները անցնում են այլ արոտավայրեր, միաժամանակ առկա է հատուկ պահպանվող տարած: Ժամանակին այդ տարածքը ծառայել է որպես համայնքի շինարարական քարի հանք, հաշվի առնելով համայնքի ընդհանուր ազգաբնակչության կարծիքը,

Համայնքի ավագանին որոշում է՝

1. <<Սարի դեմեր>> տարածքի արոտավայրը չհատկացնել վարձակալության, այլ թողնել ընդհանուր օգտագործման:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 4, դեմ 2, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3. Մամիկոն Նազարյան

4. Ռուստամ Ներսիսյան

5. Արմեն Սիրականյան

6. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23-Ն

8-ը հուլիսի 2019թ. — գ. Վարդաձոր

# Համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 14-ի թիվ 25-Ն որոշման 2-րդ կետով սահմանված՝ համայնքապետարանին պատկանող հացահատիկային կոմբայնի բերքահավաքի աշխատանքների համար 1հա հնձելու վճարը փոփոխելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ և 20-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով, միաժամանակ հաշվի առնելով դիզելային վառելիքի, քսայուղերի, պահեստամասերի շուկայական գների աճը.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքապետարանին պատկանող հացահատիկային կոմբայնով բերքահավաքի աշխատանքների 1հա տարածքի համար սահմանել 40000 /քառասուն հազար/ դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Վարդաձոր համայնքի 2018թ. դեկտեմբերի 14-ի թիվ 25-Ն որոշման 2-րդ կետով սահմանված գումարը:
3. Սույն որոշումն ուժի է ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2. Շմավոն Կարապետյան

3. Մամիկոն Նազարյան

4. Ռուստամ Ներսիսյան

5. Արմեն Սիրականյան

6. Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար — Ռոբերտ Սիրականյան